

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Ապրիլի 11-ին, կիրակի.—Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Օրը սովորականից պայծառ է, անամպ ու տաք: Դեռ վաղ առավոտյան ժամերից սկսած հավատացյալների և ուխտավորների հոծ բազմությունը լցրել է Մայր տաճարը և նրա շրջափակը, ներկա լինելով առավոտյան ժամերգությանը:

Ժամը 11-ին ուրախ ղողանջում են Մայր տաճարի զանգերը: Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանության ուղեկցությամբ, հանդիսավորապես Վեհարանից առաջնորդվում է Մայր տաճար՝ զատկական սուրբ պատարագ մատուցելու:

Սկսվում է սուրբ պատարագը, որի երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգչախումբը:

«Հայր մեր»-ից առաջ, ս. Զատկի առիթով, Վեհափառ Հայրապետը խոսում է կրոնաշունչ և հայրենաբույր մի քարոզ, որը հաջորդ երեկոյան, ժամը 11.30-ին, ձայնափոխվում է Երևանի ռադիոկայանից:

Հայրապետական սույն քարոզը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 5):

Ս. պատարագին ներկա է լինում ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող եգիպտահայերի մի մեծ խումբ:

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարանի գահասրահ:

Հանուն Մայր Աթոռի միաբանության և ներկա գտնվող ողջ հավատացյալների, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը շնորհավորում է Ն. Ս. Օծության Զատիկը, ցանկանում Նրան երկար ու երջանիկ օրեր՝ ի փառս Մայր Աթոռի պայծառության:

Այնուհետև խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, շնորհավորում ողջ հայ ժողովրդի այս մեծ տոնը, օրհնում է մեր եկեղեցին, ազգը՝ հայրենիքում և ի սփյուռս աշխարհի, ցանկանում նրան խաղաղ ու բարգավաճ օրեր:

Ներկաները հերթով համբուրում են Վեհափառի ս. Աջը և շնորհավորում Նրա Զատիկը:

Զատկական հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Այնուհետև Ն. Ս. Օծությունը բարեհաճում է ընդունել եգիպտահայ ուխտավորներին, հայրական մտերիմ զրույց ունենում նրանց հետ, հետաքրքրվում է եգիպտահայ ազգային-եկեղեցական կյանքով: Վերջում Իր պանդուխտ զավակներին տալիս է հայրական Իր օրհնությունը, ցանկանում նրանց քաջառողջություն և երջանիկ օրեր: